

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՃՇՊՐՏՈՒՄ ԱՄՄԻԱՆՈՍ ՄԱՐԿԵԼԻՆՈՍԻ
ԲՆԱԳՐՈՒՄ

ԱԼԲԵՐՏ ՄՈՒՇԵՂՅԱՆ

IV. դարի պատմագիր Ամմիանոս Մարկելինոսը իր լատիներեն «Հռոմեական պատմության» մեջ՝ անդրադարձել է 365 թվականին Վաղես կայսեր Կոստանդնուպոլիս մայրաքաղաքից Ասորիքի Անտիոք մեկնելու փաստին. «Ձմեռն անցնելուն պես Վաղեսը, շտապ Ասորիք մեկնելով (*festinans ad Syriam*), հազիվ էր Բյուլթանիայի սահմանը հասել, երբ այստեղ դուքսերի հաղորդումներից տեղեկացավ, թե գոթերի ցեղը, որն այդ ժամանակ դեռևս խավար էր, ուստի և ամենավայրագը, դարան էր դրել և պատրաստվում է ներխուժել Թրակիայի սահմանները: Եվ այս լուրն առնելով, իր նպատակակետն անհապաղ (*impromptu*) հասնելու համար, նա հրամայեց հեծյալների ու հետևակների համալրում ուղարկել այն վայրերը, որտեղից սպառնում էր բարբարոսների հարձակումը» (XXVI 6, 11): Այստեղից երևում է, որ Վաղես կայսրը Բյուլթանիայում գոթերի վրա ժամանակ չկորցնելով, առանց հետաձգելու շարունակել է ճանապարհը դեպի իր նպատակակետը՝ Ասորիք: Ամմիանոսը բոլորովին չի բացատրում Վաղես կայսեր հանկարծակի և շտապ Ասորիք մեկնելու պատճառը: Հակառակ սրան, հաջորդ իսկ գլխում, պատմագիրը հաղորդում է հետևյալ տեղեկությունը, որ ըստ էության հակասում է նախորդին. «*Sophronius vivacissimo cursu praegressus tunc notarius [...] Valentem a Caesarea Cappadocum iam profecturum, ut vaporatis aestibus Ciliciae iam lenitis ad Antiochiae percurreret sedes*» (XXVI 7, 2) - «Այժմյան նոտար Սոփրոնիոսը ճեսյընթաց կառքով հասավ Վաղեսին (այն պահին), երբ նա Կապադոկիայի Կեսարիայից արդեն պատրաստվում էր ճանապարհ ընկնել, որպեսզի տոթ եղանակը Կիլիկիայում մեղմանալու միջոցին սլանա Անտիոքի իր նստավայրը», - ինչպես հասկացել են գերմ., անգլ. և ռուս. թարգմանիչները²: Հենց այստեղ էլ, Կեսարիայից մեկնելու ժամանակ նրան հասավ Պրո-

1 A m m i a n u s M a r c e l l i n u s. Romische Geschichte (Rerum Gestarum), lateinisch und deutsch, in 4 Banden, Berlin, 1970 (այսուհետև այս գրքից արվող մեջբերումները կնշվեն տեքստում):

2 Գերմ.՝ "Valens war gerade dabei, aus Caesarea in Kappadokien abzureisen, um bei der abnehmenden Gluthitze in Kilikien zu seiner Residenz in Antiochia zu gelangen", Berlin, 1971, Bd. 4, S. 33. անգլ.՝ "He (Sophronias) met Valens just as he was on the point of leaving Caesarea in Cappadocia, in order to go to his residence at Antioch, since the oppressive heat in Cilicia was already somewhat diminished" (քանզի ճեսյը շոգը Կիլիկիայում արդեն փոքր-ինչ նվազել էր) (A m m i a n u s M a r c e l l i n u s. Rerum Gestarum. Cambridge, Massachusetts - London MCMLXIII, vol. II, p. 613). ռուս.՝ "Он (нотарий Софроний) застал Валента среди сборов покинуть Кесарию Каппадокийскую, чтобы - ввиду окончания тяжелой поры зноя в Киликии - перебраться в Антиохию"

կոպիտոսի բարձրացրած խոռվության լուրը: Ըստ Օ. Ջեեկի հաշվումների, Պրոկոպիոսի ապստամբությունը տեղի է ունեցել 365 թ. 9-րդ ամսի 28-ին³: Անհնար է հավատալ, որ հենց ձմեռն անցնելուն պես Կ. Պոլսից շուտափույթ Ասորիք մեկնած Վաղեսը, նույնիսկ «ահավոր վայրագ» գոթերի հարձակմանը ուշ չդարձնելով, աշնան մեղմ եղանակին գեռես կես ճանապարհին լինելը՝ Կիլիկիայում: Համեմատություն համար ասենք, որ նրա եղբայր Վաղենտինիանոս կայսրը Միլան (Մեգիոլանոն) մեկնելիս, գրեթե նույն ժամանակամիջոցում՝ 365 թ. ձմռան վերջից մինչև նոյեմբերի 1-ի մոտերքը Կ. Պոլսից հասել էր Փարիզ (XXVI 5, 4-8): Ասմիանոսի բնագրում *lenitas* (մեղմություն, գանգաղ ընթացք) գոյականը հեռու է ընկած *vaporatis aestibus* (տոթ եղանակ) կապակցությունից, ուստի չի կարող որոշիչ լրացում ծառայել դրան: *Lenitas* նշանակում է նաև «զառիթափ, զառիվայր»: Իմ կարծիքով այստեղ խոսքը ոչ թե Կիլիկիայի մեղմացող տոթի, այլ զառիթափ տեղանքի մասին է: Ստրաբոնը և Պտղոմեոսը ծովափնյա (հարավային) Կիլիկիան անվանում են հուն. *Kilikia Tralēia* (լատ. *Cilicia Aspera*)⁴ - ժայռոտ կամ քարքարոտ Կիլիկիա:

Փալով *vaporatis* բառին (*vapor*-տոթ, տափ, գոլորշի), կարծում եմ, որ այն աղավաղված է պարսից Շապուհ (լատ. *Sapor*) թագավորի անունից և պետք է ուղղել՝ *Saporis* (սեռ. հոլով), իսկ *aestas* (հոգնակի տր. և գործ. հոլով *aestibus*) հավասարապես նշանակում է թե՛ «տաք, շոգ եղանակ» և թե՛ «առգմական արշավանք»: Ըստ այսմ, վիճելի հատվածը պետք է թարգմանել այսպես՝ Պրոկոպիոսի ապստամբության լուրը բերող նոտարը «ճեպընթաց կառքով Վաղեսին հասավ այն պահին, երբ նա արգեն պատրաստվում էր Կապադովկյան Կեսարիայից ճանապարհ ընկնել, որպեսզի Շապուհի արշավանքների պատճառով (*ut Saporis aestibus*) Կիլիկիայի զառիթափով սլանա գեպի Անտիոքի իր նստավայրը»: «Զառիթափ» միանգամայն հարմար է գալիս *percurreret* (սլանալ, շտապել) բային: Բացի այդ Պտղոմեոսը ժայռոտ Կիլիկիան անվանում է նաև *Aspera Cilicia Selinitidis*⁵: Հարց է ծագում, արդյո՞ք Ասմիանոսի ձեռագրում *Ciliciae iam lenitis* բառերը աղավաղված չեն եղել հենց *Ciliciae Selinitidis* երկրամասի անունից: Իսկ որ Շապուհը՝ խախտելով 30-ամյա գաշինքը, իրոք անցել էր հարձակման, այդ ևս վկայում է ինքը՝ Ասմիանոսը (XXVI 4, 6). «Պարսից (Շապուհ) թագավորը ձեռքերը երկարեց Հայաստանին, որպեսզի ահավոր ուժով և փութով, բայց և անիրավությամբ միացնի այն իր տերությունը՝ արդարանալով, իբր Հորիանոսի վախճանից հետո, որի հետ նա գաշինք և հաշտություն էր կնքել, ոչինչ չի կարող արգելել, որ ինքը վերականգնի այն, ինչ որ, նրա ասելով, առաջ պատկանել էր իր նախնիներին»: Այս տեղեկությունը, որ նախորդում է Վաղեսի հանկարծակի ուղևորությանը Ասորիք և գրեթե նույն արտահայտություններով կրկնվում է նաև հետագա-

(А м м и а н М а р ц е л л и н. История, перевод с латинского Ю. Кулаковского и А. Сонни, вып. III, Киев, 1908, с. 27).

3 O. S e e k. Hermes 41, 1906, S. 518. A m m. M a r c, vol. 4, p. 309, not. 70.

4 Strabonis Geographica, Parisiis 1853, XII 1. 1. 4; Claudii Ptolemaei Geographia, voluminis primi pars secunda, Parisiis 1901, V 5. 3, 8, pp. 860, 864.

5 C 1. P t o l. Geographia, V 7, 2, 5. pp. 895, 897:

յուս՝ (XXVII 12, 1), գալիս է Հաստատելու, որ հենց այդ լուրն էլ, ըստ էության, առիթ է տվել Վաղեսին ձեռնարկելու իր հապճեպ ուղևորությունը, որը նա ստիպված եղավ ընդհատել և «վերադառնալ Գաղատիա, մինչև որ ալեկոծված դեպքերը հանդարտվեն» (XXVI 7, 2): Եվ չնայած որ Պրոկոպիոսի դեմ մղած կռիվների, նրա պարտություն և գլխատման մասին (XXVI 9, 9) մանրամասն պատմելուց հետո Ամմիանոսն այլևս չի վերադառնում Վաղեսի Անտիոք մեկնելու հարցին և շարժառիթներին, բայց և այնպես այլ հեղինակների երկերից մեղ հայտնի է դառնում այդ շարունակությունը:

V. դարի առաջին կեսի հույն եկեղեցական պատմիչներ Սոկրատ Սքոլաստիկոսը և Սոզոմենոսը նույնպես հաղորդում են Վաղեսի Անտիոք մեկնելու մասին՝ վկայելով, որ այն, իրոք, կապված է եղել պարսիկների նոր հարձակման սպառնալիքի հետ: Սոկրատի «եկեղեցական պատմություն» մեջ կարգում ենք. «Վաղեսն անհապաղ Ասորիքի Անտիոք (քաղաքը) մեկնեց՝ երկյուղ կրելով, թե միգուցե պարսիկները Հորիանոսի հետ կնքած երեսնամյա դաշինքը լուծելով՝ ներխուժեն հռոմեական սահմանները, բայց պարսիկները լուռ էին, իսկ նա խաղաղության հանդիպելով, համազույլություն դավանողների (ուղղափառների — Ա. Մ.) դեմ պիղծ պատերազմ սկսեց»⁶: Նույն առիթով Սոզոմենոսը հաղորդում է. «Այնուհետև [Վաղես կայսրը] իջավ Ասորիք. երկյուղ ուներ, թե չլինի պարսիկները լուծեն Հորիանոսի հետ կնքած երեսնամյա դաշինքը: Ուստի նրանց նոր ոտնձգությունների [դեմն առնելու] համար, բանակ դրեց Անտիոքում» (Թարգմանություններ մերն է)⁷:

Ավելին՝ VI դարի հեղինակ Հովհաննես Մալալան իր հունարեն «Ժամանակագրություն» մեջ, նույն գրվագը պատմելիս, ընդգծում է Հատկապես, որ հենց նոր կեսար նշանակված Վաղեսը (ուրեմն, խոսքը դարձյալ 365 թ. մասին է) Անտիոք էր ժամանել զորքի գլուխ անցած, քանի որ պարսից զորքը արդեն հասել էր Անտիոքի մոտերքը, բայց գործը պատերազմի չհասավ, և երկուստեք համաձայնեցին 7-ամյա խաղաղության դաշինք կնքել, որից հետո պարսիկները ետ քաշվեցին մինչև Մծբին. «Վաղենտինիանոս կայսրը բազում գործեր ձեռնարկեց Ավագ Անտիոքում: Նա պատերազմի պատրաստվեց պարսիկների դեմ՝ [նրանց վրա] ուղարկելով իր Վաղես եղբորը, որին կեսար էր նշանակել ապրիլ ամսի 1-ին: Բայց Վաղեսը ճակատամարտ չտվեց, այլ հասնելուն պես ձեռնարկեց Հաշտության դաշինքի, քանի որ անձամբ եղբորից լիազորություն էր ստացել դրա համար, եթե այստեղ հասած պարսիկները Հաշտություն խնդրեին: Այսպես, Վաղեսը զորքի բազմության հետ նոյեմբեր ամսի 10-ին, ինդիկտիոնի 14-րդ տարում գալով Ասորիքի Անտիոք՝ այնտեղ սկսեց բանակցել պարսիկների հետ Հաշտության դաշինք կնքելու համար և դաշինք կնքեց յոթ տա-

6 Socratis Scholastici Historia ecclesiastica. IV, 2 (Migne, Patrologiae graecae, t. 67, col 465). Սոկրատայ Սքոլաստիկոսի Եկեղեցական պատմություն. Վաղարշապատ, 1897, գիրք չորրորդ, գլ. Բ, էջ 297-298. «Իսկ Վաղէս վաղվաղակի յԱնտիոքիայ Ասորոց գնացեալ, կարծեալ զի մի Պարսիցն գեղեալն դաշինս երեսուն ամի առ Յորիանոսիւ լուծեալ ի Հռովմայեցւոցն ելցեն յաշխարհ. այլ Պարսկականն լուէր: Իսկ նորա խաղաղութեանն հպեալ, համագոյութեանն խորհողաց գաննուէրն յարոյց պատերազմ»:

7 Hermiae Sozomeni Ecclesiastica historia, VI 7 (Migne, Patr. graec., t. 67, col. 1613, p. 228).

րով, քանի որ պարսիկները Հաշտություն խնդրեցին և նահանջեցին կիսով չափ մինչև Մծբին»⁸ (Թարգմանությունը մերն է):

Եթե հիմք ընդունենք Մալալայի հաղորդումը, թե Վաղեսը զորքի հետ Անտիոք էր ժամանել նոյեմբերի 10-ին, դարձյալ «տոթ եղանակի մեղմանալու» մասին խոսելն անպատեհ կլիներ, այդ ուշացումը, Ամմիանոսի վկայությամբ, կապված է եղել Պրոկոպիոսի ապստամբության հետ:

Այսպիսով, ինչպես Առկրատի, Սոզոմենոսի և Մալալայի մոտ, այնպես էլ Ամմիանոսի սկզբնաղբում կայսր կամ կեսար Վաղեսի Անտիոք մեկնելը դարձյալ պետք է կապված լիներ պարսիկների, իմա՝ Շապուհի արշավանքի հետ և ոչ թե «մեղմացող տոթ եղանակի»: Այլապես Ամմիանոսի ներկա բնադրից բոլորովին հասկանալի չէ, թե ինչպե՞ս կարող էր Վաղեսը, որպես Թագակից կայսր, Վաղենտինիանոս կայսեր Փարիզ մեկնելուց հետո, անակնկալ, առանց պատճառի հեռանալ իրեն վստահված Կոստանդնուպոլիս մայրաքաղաքից և պատեհ առիթ ընձեռել Պրոկոպիոսին խռովություն բարձրացնելու:

ФИЛОЛОГИЧЕСКОЕ УТОЧНЕНИЕ В ОРИГИНАЛЕ АММИАНА МАРЦЕЛЛИНА

АЛЬБЕРТ МУШЕГЯН

Резюме

По рассказу римского историка IV века Аммиана Марцеллина, император Валенс после окончания зимы 365 года предпринял внезапное путешествие из Константинополя в Сирию, даже невзирая на угрозу нападения варваров-готов (XXVI 6, 11). Однако из продолжения явствует, что стремящийся безудержно в Антиохию Сирии Валенс, даже после ослабления летнего зноя, находился еще на полпути — в Киликии, как истолковали слова Аммиана "ut varogatis aestibus Ciliciae iam lenitis" (XXVI 7, 2) немецкий, английский и русский переводчики. Слово "varogatis" представляется спорным, и, как кажется, искажено от имени персидского царя Сапора в генетиве: Saporis. В первоначальном тексте Аммиана стояло "ut Saporis aestibus". Существительное aestas равным образом означает как "зной", так и "военный поход, нашествие", а слово lenitas должно быть истолковано не как "ослабление, смягчение (зноя)", а как "крутизна, отлогость". Историк имеет в виду крутизну Киликии, или же, вместо "Ciliciae iam lenitis" в первоначальном тексте Аммиана стояло название провинции Cilicia Selinitidis, встречающееся у Птолемея (Ptol. Geographia, V 7. 2,5). Спорный отрывок следует перевести: "Валенс уже хотел было отправиться из Кесарии Каппадокийской, чтобы вследствие нашествий Сапора (ut Saporis aestibus) по крутизне Киликии (или: по Киликии Селинитидис) промчаться в свою резиденцию в Антиохии". То, что внезапное путешествие Валенса из Константинополя в Антиохию было связано с угрозой нападения персов, подт-

⁸ Johannis Malalae Cronographia. Liber XIII, p. 338 (Migne, Patr. Graec., T. 97, col 504–505).

верждается аналогичными сообщениями церковных историков V века Сократа (IV, 2) и Созомена (VI, 7), а также византийского хронографа VI века Малаласа (Lib. XIII).

A PHILOLOGICAL EMENDATION IN THE ORIGINAL OF AMMIANUS
MARCELLINUS

ALBERT MUSHEGHIAN

S u m m a r y

According to the narration of the 4th century by Roman historian Ammianus Marcellinus, the emperor Valens after the end of the winter 365 undertook a sudden journey from Constantinople to Syria, paying no attention even to the threat of barbarian Gothic attack (XXVI, 6, 11). From the continuation, however, it appears that Valens, rushing to Antioch of Syria impetuously, even after the weakening of summer heat was still halfway – in Cilicia, as Ammianus' words "ut vaporatis aestibus Ciliciae iam Lenitis" (XXVI, 7, 2) were interpreted by German, English and Russian translators. The word "vaporatis" is arguable and seems to be distorted from the name of the Persian king Sapor in genitive – Saporis. It should have been "ut Saporis aestibus" in the primary text of Ammianus. The noun "aestas" means equally "heat" and "campaign, invasion", and the word "lenitas" should not be interpreted as "weakening, softening (of the heat)", but "steepness, slope". The historian means either "steepness of Cilicia" or in the primary text of Ammianus instead of "Ciliciae iam lenitis" was the name of the province Cilicia Selinitidis, which is recorded by Ptolemy (Geographia, V 7.2,5). The arguable fragment should be translated: "Valens already intended to leave Caesarea of Cappadocia, in order to rush to his residence in Antioch through the steepness of Cilicia (or through Cilicia Selinitidis), owing to Sapor's invasions (ut Saporis aestibus)". That Valens' sudden journey from Constantinople to Antioch was connected with the threat of Persian attack, is also confirmed by the analogous reports of the church historians of 5th century Socrates (IV, 2) and Soromenus (VI, 7), as well as the 6th century Byzantine chronographer Malalas (Lib. XIII).